Համագործակցության հուշագիր Արմավիրի (Հայաստանի Հանրապետություն) և Նաումբուրգի (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) միջև

Արմավիրի (Հայաստանի Հանրապետություն) և Նաումբուրգի (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) քաղաքային ղեկավարությունները, այսուհետ՝ «Կողմեր», նպատակ ունեն ամրապնդել երկու քաղաքների միջև բարեկամական հարաբերությունները՝ հիմնված հավասարության, բարեկամության և փոխշահավետության սկզբունքների վրա: Կողմերը պայմանավորվել են հետևյալի շուրջ:

Հոդված 1

Կողմերը կհամագործակցեն հետևյալ ոլորտներում

- Տեղական ինքնակառավարում
- Համայնքային կառավարման նոր մեթոդներ
- Ներդրումների խթանում
- Թափոնների կառավարում և ջրամատակարարում
- Քաղաքաշինություն և ճարտարապետություն
- Ներքաղաքական հասարակական տրանսպորտ և կայանատեղիների ստեղծում
- Մշակույթ, զբոսաշրջություն և երիտասարդության հարցեր
- Առողջապահություն և սոցիալական ապահովություն
- Բնապահպանություն և լանդշաֆտային պլանավորում
- Խաղողագործություն
- Դպրոցական համագործակցություն
- Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներ

Հոդված 2

Առաջին հոդվածում նշված ոլորտների շրջանակներում կողմերը կիրականացնեն փոխադարձ փորձագիտական այցեր և փորձի փոխանակում:Կողմերը միմյանց կտրամադրեն փոխադարձ տեղեկատվություն և ուղեցույցեր:

Հոդված 3

Երկու քաղաքների միջև համագործակցությունը կզարգանա ազգային իրավունքի համաձայն և կողմերի լիազորությունների շրջանակներում:

Հոդված 4

Կողմերը բոլոր ոլորտներում կմշակեն իրականացման ծրագրեր: Դրանք կլինեն հուշագրի հիմնական բաղադրիչները:

Հոդված 5

Այս հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից սկսած, և ուժի մեջ կմնա այնքան ժամանակ,քանի դեռ կողմերից որևէ մեկը մյուս կողմին գրավոր կերպով չի ներկայացրել հուշագիրը դադարեցնելու իր մտադրության մասին: Դադարեցման մասին ծանուցումը պետք է տրվի վեց ամիս ժամկետով:

Ստորագրվելու է Նաումբուրգ քաղաքում 2022 թվականի նոյեմբերի 16-ին երկու բնօրինակով՝ հայերեն և գերմաներեն տարբերակներով, որոնց տեքստերը նույնական են: Թարգմանության մեջ անհամապատասխանության դեպքում կկիրառվի գերմաներեն տեքստը:

Դավիթ Խուդաթյան
Արմավիրի քաղաքապետ

Արմին Մյուլլեր
Նաումբուրգի գլխավոր քաղաքապետ